MA-SIS

ՄԱ-ՍԻՍ

N° 6

Gazette des Arméniens de Lille, Juillet – 2009 – Սեպտեմբեր, Լիլահայ համայնքի պարբերական

SAINT CHRYSOLE (CHRYSOLIUS), MARTYRE ARMÉNIEN DE VERLINGHEM

Le monument hagiographique sur la rue de la Fontaine dédié à Saint Chrysole fait partie du patrimoine architectural de Verlinghem, une commune de 2 300 habitants en plein cœur de la vallée de la Deûle. On ne peut pas le manquer en entrant dans le village.

Le monument de Saint Chrysole à Verlinghem
Սուրբ Քրիզոլի արձանը Վերլինգեմում

Selon la tradition, au 4e siècle, Chrysole fuit l'Arménie lors des persécutions des chrétiens par Dioclétien. Il se rend à Rome et est reçu par le Pape Marcellus 1er. Le prédicateur arménien catholique Chrysole, avec un groupe de missionnaires, est envoyé par le Pape dans le Nord de la Gaule, plus précisément dans les Flandres (le territoire entre Cambrai et Tournai), afin d'évangéliser la population païenne de la région. Il a été accompagné de Saint Piat (Piatus). Chrysole devient le disciple spirituel de Saint-Denis. Il est ensuite nommé évêque et prêche également l'évangile à Bruges qui, plusieurs siècles après, transférera à l'église de Verlinghem une relique de Saint Chrysole.

Approximativement vers 303, à Verlinghem, Chrysole rencontre des soldats romains qui le poursuivent et le décapite d'un coup d'épée. Le crâne se brise en trois morceaux. Ensuite, selon la légende, un miracle se produit : Saint Chrysole reconstitue son crâne et se rend à Comines en traversant la Deûle là où elle pouvait être franchie à pied. Ce gué porte aujourd'hui le nom de Saint Chrysole. Il va mourir à Comines. C'est Saint-Eloi qui va retirer les restes de Saint Chrysole de la terre et les placera dans une châsse. Cette dernière sera ensuite transférée à Bruges considéré comme un endroit plus sûr pendant les guerres.

ՍՈՒՐԲ ՔՂԻԶՈԼ (ՔՂԻԶՈԼԻՈՒՍ). ՎԵՐԼԻՆԳԵՄ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱԶԳԻ ՆԱՀԱՏԱԿԸ

Ֆոնտենի փողոցում գտնվող Սուրբ Քրիզոլին նվիրված եկեղեցական հուշահամալիրը Վերլինգեմի ճարտարապետական ժառանգության մի մասն է: Շուրջ 2 300 բնակչություն ունեցող այս համայնքը գտնվում է Դյոլի դաշտավայրի կենտրոնում: Մտնելով այդ գյուղ՝ հնարավոր չէ հուշահամալիրը չնկատել:

Ավանդույթի համաձայն՝ 4-րդ դարում Քրիզոլը փախչում է Հայաստանից՝ խուսափելով Դիոկլեսիենի կազմակերպած քրիստոնյաների հետապնդումներից: Նա հասնում է Հռոմ, որտեղ նրան ընդունում է Մարսելիուս 1-ին Պապը: Հայ քարոզիչ, կաթոլիկ Քրիզոլին մի խումբ միսիոներների հետ Պապը ուղարկում է հյուսիսային Գաղիա՝ ավելի ստույգ Ֆլանդրիա (Կամբրեի և Թուրնեի միջև ընկած տարածքը)՝ տեղի ոչ քրիստոնյա բնակչության շրջանում ավետարանը քարոզելու համար: Նրան ուղեկցում էր Սուրբ Պիատը (Պիատուս): Սուրբ Քրիզոլը դառնում է Սեն Դենիի հոգևոր աշակերտներից մեկը: Այնուհետև նա օծվում է եպիսկոպոս և ավետարան է տարածում Բրյուգգեում, որտեղից էլ մի քանի դար անց Վերլինգեմի եկեղեցուն փոխանցվում է Սուրբ Քրիզոլի մասունքներից մեկը:

Մոտավորապես 303 թվականին Վերլինգեմում Քրիզոլը հանդիպում է հռոմեացի զինվորների, որոնք նրան հետապնդում են և գլխատում: Նրա գանգը բաժանվում է երեք մասի: Այնուհետև, ըստ ավանդության, հրաշք է տեղի ունենում. Սուրբ Քրիզոլը հավաքում է գանգոսկրերը և Դյոլ գետի ոտքով անցանելի մասով գնում հասնում է Կոմին: Այդ ծանծաղուտն այսօր կրում է Սուրբ Քրիզոլի անունը: Նա վախճանվում է Կոմինում: Հետագայում Սուրբ Էլուան կատարում է արտաշիրիմում և նրա մասունքները տեղադրում է տապանակի մեջ: Այնուհետև տապանակը տեղափոխվում է Բրյուգգե, որը պատերազմների ժամանակ ավելի ապահով վայր էր:

L'eglise Saint Chrysole (à gauche) et la Fontaine Saint Chrysole (à droite) de Verlinghem
Վերլինգեմի Սուրբ Քրիզոլ եկեղեցին (ձախում) և Սուրբ Քրիզոլ աղբյուրը (աջում)

En 1611, Bruges cède une partie des restes du Saint à Tournai où, jusqu'à nos jours, chaque année, une fête est célébrée en sa mémoire.

Selon la légende, à l'endroit où Chrysole avait été décapité à Verlinghem, trois sources miraculeuses ont jailli. Les gens qui avaient des problèmes oculaires ou des maux de gorge venaient se faire soigner par cette eau bénie. Aujourd'hui de cette tradition il ne reste que la légende volontairement racontée par les villageois. La fontaine est un monument classé et fait partie du patrimoine communal. Il n'y a pas longtemps elle a été réno-vée par la commune et en est une fierté.

L'église néo-byzantine Saint Chrysole de Comines
Կոմին քաղաքի նեո-բյուզանդական ոճի Սուրբ Քղիզոլ եկեղեցին

Au centre de Verlinghem se trouve l'église qui porte le nom de Saint-Chrysole. Elle a été construite au 16^{e} siècle. En 1840, un incendie ravage cette église. Seule la tour reste intacte. Les deux Guerres mondiales n'ont pas épargné non plus ce lieu de culte. Plus tard l'église est en même temps rénovée et agrandie. Elle garde précieusement la relique de Saint-Chrysole. À travers les vitraux de l'église on peut voir l'histoire de ce prédicateur arménien. Le 7 février de chaque année Saint Chrysole est célébré. Ses reliques sont également vénérées à la basilique de Saint-Donatien de Bruges.

Saint-Chrysole a donné son nom à beaucoup de lieux et monuments situés dans le Nord. Il existe une ferme qui porte le nom du Saint. Après sa réhabilitation récente, elle est devenue une salle de réceptions. Il existe également une auberge de Saint-Chrysole abandonnée. La façade de l'église Saint Vaast de Wam-brechies (au-dessous de la grande rosace) est ornée des statues des quatre saints locaux : Saint-Hubert, Saint-Benoît, Saint-Bernard et Saint-Chrysole.

L'église Saint-Chrysole de Comines a été construite en style néo-byzantin entre 1922-1929 à la place de l'ancienne détruite pendant la Première Guerre mondiale. L'église originelle a été érigée à l'emplacement d'un autel élevé par Saint-Chrysole lui même et dédié à Saint-Pierre.

Garik Galstyan

1611 թվականին Բրյուգգեն մասունքների մի մասը զիջում է Թուրնեին, որտեղ մինչև այսօր տեղի են ունենում ամենամյա տոնակատարություններ՝ նվիրված Սուրբ Քղիզոլին:

Ըստ ավանդազրույցի՝ Վերլինգեմում գտնվող այն վայրում, որտեղ Սուրբ Քղիզոլը գլխատվել է, բխել են երեք հրաշագործ աղբյուրներ: Մարդիկ, ովքեր ունեին տեսողական կամ կոկորդի հետ կապված խնդիրներ, գալիս էին բուժվելու այս սուրբ ջրով: Այսօր այդ ավանդույթից մնացել է միայն զրույցը, որը հաճույքով պատմում են տեղաբնակները: Շատրվանը՝ որպես հուշարձան, համայնքի մշակութային ժառանգության մաս է: Վերջերս հա-մայնքը սեփական ուժերով նորոգեց այս հուշարձանը, որը տե-ղաբնակների հպարտության առարկան է:

Վերլինգեմի կենտրոնում է գտնվում է Սուրբ Քղիզոլի անունը կրող եկեղեցին, որը կառուցվել է 16-րդ դարում: 1840 թվականին հրդեհի հետևանքով եկեղեցին ավերվում է: Անվնաս է մնում միայն աշտարակը: Երկու համաշխարհային պատե-րազմները նույնպես չեն խնայում այս սրբավայրը: Ավելի ուշ՝ եկեղեցին նորացվել և ընդարձակվել է: Այստեղ մեծ խնամքով պահպանվում է Սուրբ Քղիզոլի մասունքը: Հայ քարոզչի կյանքի պատմությունը կարելի է նաև տեսնել եկեղեցու ապակյա զար-դապատկերների մեջ: Յուրաքանչյուր տարվա փետրվարի 7-ին նշվում է Սուրբ Քղիզոլի տոնը: Սուրբ Քղիզոլի մասունքներից պահպանվում են նաև Բրյուգգեի Սուրբ Դոնասիեն տաճարում:

Սուրբ Քղիզոլի անունով Նորդի շրջանում կան ուրիշ այլ հիշարժան վայրեր: Սրբի անունով կա մի շինություն, որը վերջերս նորոգվելուց հետո վերածվել է ընդունելությունների սրահի: Գոյություն ունի նաև Սուրբ Քղիզոլի անվամբ մի լքված իջևանատեղի:

Ուամբրոշի քաղաքի Սուրբ Վաաստ եկեղեցու ճակատա-յին մասը զարդարված է չորս տեղական սրբերի՝ սուրբ Հյուբեր-թի, սուրբ Բենեդիկտոսի, սուրբ Բերնարի և սուրբ Քղիզոլի քան-դակներով:



La façade de l'église Saint-Vaast de Wambrechies
Ուամբրոշի քաղաքի Սուրբ Վաաստ եկեղեցու ճակատային մասը

Կոմին քաղաքի Սուրբ Քղիզոլ եկեղեցին 1922-1929 թվա-կաններին կառուցվել է նեո-բյուզանդական ոճով՝ նախկին եկե-ղեցու տեղում, որն ավիրվել էր Առաջին աշխարհամարտի ժա-մանակ: Նախկին եկեղեցին կառուցվել էր Սուրբ Քղիզոլի շինած խորանի տեղում, որը նվիրվել էր Սուրբ Պետրոսին:

Գարիկ Գալստյան

LA FÊTE DE NOËL DANS LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE

La fête de Noël est l’une des manifestations importante du monde chrétien. Elle est fêtée avec beaucoup de joie et d’enthousiasme par toutes les branches de cette confession : les catholiques, les orthodoxes et les protestants. Tous sont plein d’amour et d’espoir quelle que soit la date de la célébration de la naissance de Jésus variant selon les croyances... Il s’agit de la naissance et de la résurrection qui ont complètement changé le cours et le sens de la vie de l’humanité.

Le Père Haroutioun lors de la célébration de la messe de Noël
Տեր Հարությունը Սուրբ Ծննդյան պատարագը մատուցելիս

Nous les Arméniens célébrons cet évènement le 6 janvier tout en restant fidèles aux trois conciles universels de Calcédoine. Notre peuple, considéré comme biblique, a beaucoup souffert aux carrefours cruels du destin. Il a été privé d’État pendant plusieurs siècles. Néanmoins, il a pu subsister jusqu’à nos jours et rester arménien jusqu’à la constitution d’un État tant désiré, grâce uniquement à la sa foi sereine. Suite aux aléas historiques de notre destin, nous avons aujourd’hui une diaspora, dispersée dans le monde entier, qui garde à l’étranger son identité nationale d’abord par la foi.

La communauté arménienne de Lille est une petite partie de la diaspora arménienne mondiale qui dans de difficiles conditions de vie trouve du temps pour organiser une vie communautaire.

Les Arméniens de Lille à l’église Saint Benoit
Լիլի հայ համայնքի ներկայացուցիչները Սուրբ Բենուա եկեղեցում

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ԼԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սուրբ Ծննդյան տոնակատարությունը ողջ քրիստոնյա աշխարհի կարևորագույն արարողություններից մեկն է, որը մեծ խանդավառությամբ են տոնում այս դավանանքի բոլոր ճյուղերը՝ թե՛ կաթոլիկները, թե՛ ուղղափառները, թե՛ բողոքականները: Ծննդյան տոներին բոլորը սպասում են մեծ ակնկալիքներով ու սիրով, և ամենևին նշանակություն չունի, թե այս հզոր հավատի որ հատվածը երբ է նշում Հիսուսի Սուրբ Ծնունդը… Խոսքը միակ և ճշմարիտ Աստծո նույն բարեբեր ծննդյան և սուրբ հայտնության մասին է, որը լիովին փոխեց մարդկության կյանքի ընթացքն ու իմաստը:

Organiste et chanteuse Anahit Duzyan lors de la célébration de la messe
Երգեհոնահար և երգչուհի Անահիտ Դուզյանը պատարագի ժամանակ

Մենք՝ հայերս, Հիսուսի ծնունդը տոնում ենք հունվարի 6ին՝ մնալով հավատարիմ Քաղքեդոնական երեք տիեզերական ժողովների կանոններին: Ճակատագրի դաժան քառուղիներում տառապած, դարեր շարունակ պետականություն չունեցած մեր՝ բիբլիական համարվող ժողովուրդը միմիայն իր առողջ հավատի միջոցով է կարողացել գոյատևել առ այսօր և մնալ հայ ու ձեռք բերել բաղձալի պետականություն: Պատմական ճակատագրի վայրիվերումների արդյունքում մենք այսօր ունենք Սփյուռք՝ աշխարհով մեկ սփռված հայություն, որն արտերկրում իր ազգային ինքնությունը պահպանում է նախևառաջ հավատի միջոցով:

Սփյուռքահայության մի փոքրիկ մասնիկն էլ լիլահայությունն է, որն իր լարված կենցաղի պայմաններում ժամանակ է գտնում՝ համայնքի կյանքին մասնակցելու համար:

Լիլահայերը անմասն չմնացին Սուրբ Ծննդյան տոների խանդավառությունից: Փարիզից ժամանած պատվական Տեր Հարությունը հունվարի 10-ին (նշենք, որ մեզանում Ծննդյան տոների ժա-

Les Arméniens de Lille à l’église Saint Benoit
Լիլի հայ համայնքի ներկայացուցիչները Սուրբ Բենուա եկեղեցում

Les Arméniens de Lille ne sont pas restés en dehors des festivités de Noël. Le respectable père Haroutioun est venu de Paris le 10 janvier (à noter que la célébration de Noël chez les Arméniens se pratique du 6 au 14 janvier) dans l'église catholique Saint Benoit du quartier de Wazemmes de Lille pour dire la messe de cette fête religieuse. Remarquons que Noël est la première fête dominicale de l'année.

Le père Haroutioun a célébré une magnifique messe pour Dieu, à la gloire de sa Sainte naissance et de son existence mystérieuse et éternelle. Il est arrivé à Lille avec notre compatriote Anahit Duzyan, une chanteuse d'origine arménienne qui réside à Paris. Avec ses chants classiques uniques, elle a émerveillé l'assistance.

Le père Haroutioun et le nouveau parrain de la communauté : Vahram Barseghyan
Տեր Հարությունը և Վահրամ Բարսեղյանը՝ համայնքի նորընտիր խաչ-քավորը

La première cérémonie de cette journée a été dédiée à la naissance de Jésus, puis à la bénédiction de l'eau. Le prêtre a exécuté cette bénédiction avec beaucoup de talent. Tous ont communié avec le vin bénit, qui est le sang de Jésus, et avec le pain d'hostie qui représente son corps. Le public a également reçu de l'eau bénite de la main du père. Il a ainsi célébré avec ferveur la naissance du Seigneur en priant, en allumant des bougies et en brûlant de l'encens.

Les paroles éclairées de Père Haroutioun et ses prières ont trouvé un écho particulier chez les participants et illuminé leurs âmes. Lorsque la parole du prêtre a été accompagnée par les chants ecclésiastiques arméniens interprétés par la chanteuse invitée, les voûtes de l'église catholique se sont comme arménisées. Dans ce cas les paroles deviennent inutiles.

L'apogée de la cérémonie a été la parfaite exécution de la célèbre prière de *Saint Saint*, grâce à laquelle le Saint-Esprit a été glorifié dans l'âme des participants sur les ailes légères de la chanson et de la prière. L'expression admirative, enthousiaste et recueillie des visages témoignait déjà de leur émotion. À la fin de la messe, le prêtre a dit le requiem pour les morts, décédés récemment ou de longue date, en leur souhaitant un repos paisible et une vie éternelle.

Après la messe, les fidèles se sont félicités mutuellement à l'occasion de la naissance de Jésus par des paroles traditionnelles : « Christ est né et fut révélé », « Bénie soit la révélation du Christ, une grande nouvelle pour vous et pour nous ».

Les organisateurs ont prévu également une deuxième partie à la manifestation. À l'intérieur de l'église ont été dressées des tables de fête avec des plats et de la pâtisserie traditionnels pour ce jour. Cette démarche d'hospitalité a été très belle et très digne.

մանակահատվածը ձգվում է հունվարի 6-ից 14-ը) Լիլի Ուազեմ թաղամասի սբ. Բենուա կաթոլիկ եկեղեցում այս եկեղեցական տոնի կապակցությամբ սուրբ պատարագ մատուցեց: Նշենք, որ Ծննդյան տոնը նորամուտ տարվա առաջին Տերունական տոնն է:

Մեծարգո քահանան հրաշալի մի պատարագ մատուցեց առ Աստված՝ ի փառաբանումն Նրա Սուրբ Ծննդյան և ի գոհացումն նրա մշտնջենական գոյության առեղծվածային խորհրդի: Տեր Հարությունի հետ Լիլ էր ժամանել նաև մեր հայրենակցուհին՝ փարիզաբնակ հայազգի երգչուհի Անահիտ Դուզյանը, որն իր անզուգական դասական երգարվեստով հիացրեց ներկաներին:

Այդ աստվածաշնորհ օրվա առաջին խարհուրդը Հիսուսի Սուրբ Ծնունդն էր, իսկ երկրորդը՝ Ջրօրհնեքը: Պատարագիչ քահանան շնորհալի կերպով կատարեց նաև Ջրօրհնեքի արարողակարգը: Բոլորը հաղորդվեցին Բարձրյալի հետ օրհնած գինով՝ որ է Հիսուսի արյունը, և հացով (նշխարով)՝ որ է նրա մարմինը: Ժողովուրդը քահանայի ձեռքից ըմպեցին նաև օրհնյալ սուրբ ջուրը և աղոթքով, մոմավառությամբ և խնկարկությամբ գոհունակությամբ փառաբանեցին Տիրոջ Ծնունդն ու Ջրօրհնեքը:

Տեր Հարությունի ականջալուր ու բանիմաց խոսքը և անանձնական աղոթքները մի յուրահատուկ արձագանք գտան և սիրո հավատի նոր ուղիներ ու լույս սփռեցին մարդկանց հոգիներում: Իսկ երբ քահանայի խոսքը զարդարվում էր հրավիրյալ երգչուհու՝ հայկական եկեղեցական շարականների կատարումներով, որոնք կամա-ակամա հայեցնում էին կաթոլիկ եկեղեցու կամարները, ապա այստեղ խոսքերն ավելորդ էին:

Արարողության բարձրակետը հանդիսացավ հանրահայտ «Սուրբ-սուրբի» անթերի կատարումը, որի օգնությամբ սուրբ հոգին ինքնըստինքյան, երգի և աղոթքի թեթև թևով փառավորվեց ներկա գտնվողների հոգիներում: Մարդկանց դեմքերի հիացական, խանդավառ և լուսավորված արտահայտությունը արդեն փաստում էր նրանց սրբագործված զգացմունքների մասին: Պատարագի վերջում փորձառու քահանան կատարեց հոգեհանգստյան արարողությունը՝ խաղաղ նինջ և հավիտենական կյանք մաղթելով բոլոր հին ու նոր ննջեցյալներին:

Le public a été servi d'eau bénite par la main du prêtre
Ժողովուրդը քահանայի ձեռքից ըմպում են օրհնյալ սուրբ ջուրը

Պատարագի ավարտից հետո ներկաները միմյանց շնորհավորեցին Հիսուսի Սուրբ Ծննդյան առթիվ՝ հայտնի խոսք ու պատասխանով. «Հիսուս ծնավ և հայտնեցավ», «Օրհնյալ է ծնունդ Հիսուսի, մեզ ու ձեզ մեծ ավետիս»:

Կազմակերպիչները նախատեսել էին նաև երկրորդ մաս. հենց եկեղեցու ներսում պատրաստվեցին տոնական սեղաններ՝ օրվա խորհրդի համապատասխան ավանդական ուտեստներով և քաղցրավենիքով: Հյուրասիրությունը կայացավ պատշաճ և գեղեցիկ կերպով:

Les participants sont rentrés chez eux contents et soulagés, emportant avec eux le souvenir de ce jour bien rempli et dédié à Dieu, en oubliant complètement le froid et l'humidité de l'extérieur ainsi que les soucis de la vie quotidienne.

Nous présentons nos profonds remerciements au charismatique père Haroutioun et à tous les infatigables organisateurs, en espérant que de pareilles fêtes ponctueront plus souvent le quotidien de la communauté arménienne de Lille.

P.S. Sans aucun doute, le père Haroutioun et les organisateurs n'ont pas ménagé leurs efforts afin d'offrir la meilleure cérémonie possible, néanmoins il reste un « mais » que je ne peux malheureusement taire : La communauté arménienne de Lille n'était pas suffisamment présente et cela ne peux être justifié même si les excuses sont réelles…

Le plus important est de le vouloir et d'avoir un sentiment de responsabilité. Je suis navrée mais les absents ont vraiment perdu beaucoup de choses...

Soussanna Moughnetsyan

ESCAPADES À PARIS POUR RÊVER ENCORE

Par deux fois nous avons pu partir à nouveau à la rencontre de la troupe *Yeraz* que beaucoup d'entre nous connaissent maintenant.

Un groupe d'Arméniennes de Lille devant l'entrée du *Casino de Paris*
Լիլի հայուհիների մի խումբ «Կազինո դը Պարի»ի մուտքի մոտ

Après une tournée de dix représentations au *Casino du Liban* à Beyrouth, la troupe s'est produite au complet, soit une soixantaine de personnes, au *Casino de Paris* les 14 et 15 mars dernier. L'occasion encore pour une dizaine d'entre nous de goûter à ce spectacle riche en couleur et en émotion.

La salle, située en plein centre de Paris au cœur d'un quartier très populaire, comporte 1500 places. Elle était presque comble ce dimanche. Nous avons reconnu les danses interprétées à Lille et de nombreuses autres scènes, historiques et de la vie quotidienne, interprétées par des danseurs et acteurs de tous âges. À l'issue du spectacle, la troupe s'est mêlée au public sortant dans le hall et a partagé avec lui une chaîne de danse endiablée. Elle était accompagnée par l'*Arménian folk quintet* qui a animé notre fête de l'alphabet de l'année dernière.

Ներկաները զոհ և թեթևացած տուն գնացին՝ իրենց հետ տանելով այդ հագեցած, աստվածօրհնյալ օրվա սուրբ խորհուրդը՝ իսպառ մոռացած թե՛ դրսի թաց ու գորշ ցուրտը, թե՛ իրենց առօրյա հոգսերը:

Մենք մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում պատարագիչ քահանա բարեշնորհ տեր Հարությունին և բոլոր անխոնջ աշխատող կազմակերպիչներին՝ հուսալով, որ նման տոները ավելի հաճախ կզարդարեն լիլահայ համայնքի առօրյան:

Հ.Գ. –Ինչ խոսք, քահանան և կազմակերպիչները ջանք չխնայեցին Սուրբ Ծննդյան տոնակատարությունը լավագույնս կազմակերպելու համար, սակայն կա մի «բայց», որի մասին, ցավոք, չեմ կարող լռել. լիլահայ համայնքը ոչ լրիվ կազմով էր ներկա, և այդ հանգամանքը ոչ մի արդարացում չունի, որքան էլ պատճառաբանությունները հավաստի լինեն…

Ամենակարևորը իսկապես ցանկանալն է և պարտքի զգացումը: Ցավում եմ, բայց բացակաները իսկապես մեծ կորուստ ունեցան…

Սուսաննա Մուղնեցյան

ԿԱՐՃԱՏԵՎ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՊԻ ՓԱՐԻԶ՝ ՆՈՐԻՑ «ԵՐԱԶԵԼՈՒ»

Մենք կարողացանք ևս երկու անգամ ներկա լինել մեզանից շատերին արդեն ծանոթ «Երազ» համույթի ներկայացումներին:

Բեյրութի «Կազինո դյու Լիբան» համերգասրահում տասը ելույթներից բաղկացած հյուրախաղերից հետո համույթը ամբողջ խմբով՝ շուրջ վաթսուն հոգի, մարտի 14-ին և 15-ին հանդես եկավ «Կազինո դը Պարի»ի բեմահարթակում: Սա ևս մեկ առիթ էր մեզանից մի քանիսի համար վայելել գույներով և հույզերով հարուստ այդ համերգը:

1500 տեղանոց համերգասրահը գտնվում է Փարիզի կենտրոնում՝ խիտ բնակեցված մի թաղամասում: Այդ կիրակի օրը դահլիճը գրեթե լիքն էր հանդիսատեսներով: Մենք ճանաչեցինք Լիլում ներկայացված պարերը, ինչպես նաև բազմաթիվ այլ բեմականացումներ, որոնք ներշնչված էին հայ ժողովրդի պատմությունից ու առօրյա կյանքից և կատարվում էին տարբեր տարիքի պարողների և դերասանների կողմից: Ներկայացումից հետո շենքի նախասրահում համույթի անդամները, պարերի մի փոթորկային շղթա կազմելով, միախառնվեցին հեռացող հանդիսատեսներներին: Նրանց նվագակցում էր «Հայկական ֆոլկ քվինթեթ»ը, որն անցյալ տարի նվագեց մեր այբբենհարանի հանդեսի ժամանակ:

Les danseuses gracieuses de *Yeraz* sur la scène du *Casino de Paris*
«Երազ»ի հեզաճկուն պարուհիները՝ «Կազինո դը Պարի»ի բեմի վրա

Madame Galstian nous a également dit qu'en juin son école de danse présenterait le traditionnel spectacle de fin d'année restituant les acquis des élèves. L'école n'ayant pas pu avoir une salle de représentation sur deux dates, le nombre de places pour ce spectacle a été très limité (400) et réservé en priorité aux familles des élèves. Nous n'avons finalement obtenu que cinq places en dernière minute et avons donné la priorité à nos professeurs de danse.

L. Lamarche et la rayonnante Madame Galstian après le spectacle
Լ. Լամաղշը և զմայլելի տիկին Գալստյանը ներկայացումից հետո

Le 21 juin, jour de la Fête de la musique, nous nous sommes donc rendues au pôle culturel d'Alfortville qui dispose d'une salle de spectacle de 400 places. 150 enfants et adultes se sont mobilisés pour ce spectacle intitulé *Les saisons*.

En quatre temps donc, ce sont 27 danses qui ont été interprétées. Elles étaient accompagnées ou entrecoupées de vidéos de circonstances. J'ai particulièrement retenu la *Danse des tournesols* interprétée par une quinzaine de jeunes filles, les *Papillons de Lori* dansés par une douzaine de garçons et filles de 6 à 8 ans, et une danse au tapis jouée par les plus âgés des danseuses et danseurs.

Les danseurs de la troupe *Yeraz* ont accompagné le spectacle avec trois nouvelles créations dont une très impressionnante *Forteresse d'Amberd* et la gracieuse *Vigne d'Ararat*. Pour les préparer, ils ont bénéficié d'un stage de deux semaines avec la chorégraphe arménienne Anna Karapetian.

L'école et la compagnie disposent de plus de 400 costumes créés par les couturières bénévoles de la compagnie qui ajustent ceux-ci à chaque représentation. Elles ont été ovationnées à la fin du spectacle. Les élèves de l'école sont répartis en sept classes gérées par trois professeurs qui se sont également produits dans le spectacle. Il s'agit de Christina Galstian, Catherine Darbinian et Tigran Virabyan. Leur professionnalisme et leur exigence ont fait leur preuve par la qualité de cette représentation.

La salle était pleine de parents et grands-parents parlant beaucoup en arménien. La fierté se lisait sur le visage de tous à l'issue du spectacle.

L'année prochaine, l'école de danse fêtera ses dix ans. Elle prépare déjà ce rendez-vous qui donnera lieu à un grand événement. Peut-être pourrons-nous à nouveau nous glisser dans la salle cette fois plus nombreux…

Louisette Lamarche

Տիկին Գալստյանը մեզ հայտնեց, որ հունիսին իր դպրոցի սաները կտան ավանդական դարձած տարեվերջյան ներկայացումը, որի ընթացքում աշակերտները ամփոփում են ձեռք բերած արդյունքները: Քանի որ դպրոցը չէր կարողացել նոր դահլիճ վարձակալել, տեղերը խիստ սահմանափակ էին (400) և առաջնությունը տրված էր աշակերտների հարազատներին: Վերջին պահին մեզ հաջողվեց ձեռք բերել հինգ տոմս, որոնց օգտագործման նախապատվությունը տրվեց մեր պարուսույցներին:

Հունիսի 21-ին, որը համընկել էր երգի տոնի հետ, մենք ուղևորվեցինք Ալֆորվիլի մշակույթի կենտրոն, որն իր տրամադրության տակ ունի 400 տեղանոց դահլիճ: «Տարվա եղանակներ» կոչվող այդ ներկայացման մեջ ընդգրկված էին 150 երեխա և մեծահասակ:

Այսպիսով՝ 27 պար ներկայացրեցին տարվա չորս եղանակները, որոնք ուղեկցվում և ընդհատվում էին համապատասխան տեսապատկերներով: Իմ հիշողության մեջ հատկապես տպավորվեցին «Արևածաղիկների պարը»՝ մոտ 15 երիտասարդ աղջիկների կատարմամբ, «Լոռվա թիթեռնիկները», որը պարեց մոտ 12 հոգիանոց 6-8 տարեկան աղջիկ-տղաների խումբը և «Գորգերով պարը»՝ ամենամեծահասակ պարող-պարողուհիների մասնակցությամբ:

«Երազ» համույթի պարողները ներկայացրեցին երեք նոր ստեղծագործություններ, որոնց թվում էին շատ տպավորիչ «Ամբերդի ամրոցը» և հեզաճկուն «Արարատյան խաղողը»: Նոր պարերը պատրաստելու համար նրանք երկշաբաթյա դասընթացներ էին անցել պարուսույց Աննա Կարապետյանի հետ:

Դպրոցը և ընկերությունը ունեն 400-ից ավելի զգեստներ՝ կարված տեղի կամավոր դերձակների կողմից, որոնք էլ այդ զգեստները ձևափոխում են ըստ ներկայացման: Համերգի վերջում դահլիճը նրանց ողջունեց բուռն ծափահարություններով: Աշակերտները բաժանված են յոթ դասարանների միջև, որոնք գտնվում են համերգին նույնպես մասնակցած երեք պարուսույցների ղեկավարության տակ: Խոսքը վերաբերում է Քրիստինա Գալստյանին, Կատրին Դարբինյանին և Տիգրան Վիրաբյանին: Նրանց մասնագիտական վարպետության և պահանջկոտության մասին վկայեց համերգի բարձր որակը:

Դահլիճում բազմաթիվ էին ծնողների և տատիկ-պապիկների թիվը, որոնց մեծ մասը հայերեն էր խոսում: Ներկայացման ավարտից հետո ակներև էր, որ նրանք հպարտ էին իրենց երեխաներով:

Հաջորդ տարի պարի դպրոցը կտոնի իր տասնամյակը: Նա արդեն նախապատրաստվում է այդ մեծ իրադարձությանը: Միգուցե մենք կրկին հնարավորություն կունենանք ներկա լինելու, բայց այս անգամ ավելի մեծ թվով...

Լուիզետ Լամարշ

Arminé avec une des danseuses de *Yeraz* dans le hall du *Casino*
Արմինեն «Երազ»-ի պարուհիներից մեկի հետ՝ «Կազինո»-յի նախասրահում

JARDIN D'EREVAN AU CŒUR DE PARIS

Le groupe lillois devant le monument de Komitas
Լիլից ժամանած խումբը Կոմիտասի արձանի մոտ

À l'occasion de notre sortie au *Casino de Paris*, nous sommes allés voir le Jardin d'Erevan inauguré dans le 8e arrondissement de Paris le 12 mars 2009. Le ministre arménien des Affaires étrangères E. Nalbandian (à l'origine de l'initiative), le maire de Paris Bertrand Delanoë, Charles Aznavour (qui a dévoilé la plaque officielle du « Jardin d'Erevan ») et la chanteuse Hélene Ségara ont été présents à la cérémonie d'inauguration du jardin. Cet espace de repos est situé le long de la Seine derrière la statue de Komitas (place du Canada) et s'étire jusqu'à celle de l'écrivain polonais Adam Mickiewicz. Ce lieu de promenade d'une longueur d'environ 250 mètres sur 25 mètres de large est prestigieux mais particulièrement vide, constitué d'une simple pelouse entourée de bancs. Il nous suffisait de traverser le jardin, de prendre quelques photos pour atteindre ensuite l'église arménienne rue Jean Goujon.

Louisette Lamarche

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՅԳԻ ՓԱՐԻԶԻ ՍՐՏՈՒՄ

«Կազինո դը Պարի» մեկնելու առիթով մենք այցելեցինք Երևանի անվան այգին, որի հանդիսավոր բացումը տեղի էր ունեցել մարտի 12-ին՝ Փարիզի 8-րդ թաղամասում: Այդ բացմանը ներկա էին Հայաստանի արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանը (նախաձեռնության հեղինակը), Փարիզի քաղաքապետ Բ. Դելանուան, Շառլ Ազնավուրը (որը բացեց Երևանի անվան այգու պաշտոնական ցուցատախտակը) և երգչուհի Հելեն Սեգարան: Հանգստի այս վայրը սկսվում է Կոմիտասի հուշարձանի ետնամասից (Կանադայի հրապարակ), ձգվում Սենայի երկայնքով և հասնում մինչև լեհ բանաստեղծ Ադամ Միցկևիչի հուշարձանը: Զբոսավայրը գտնվում է քաղաքի ամենաուշագրավ վայրերից մեկում, ունի 250 մ երկարություն և 25 մ լայնություն, սակայն յուրահատուկ ձևով դատարկ է. կանաչ ծածկույթ՝ շրջապատված նստարաններով: Մենք քայլելով անցանք այգին, լուսանկարվեցինք և ուղևորվեցինք դեպի Ժան Գուժոն փողոցի վրա գտնվող հայկական եկեղեցին:

Լուիզեթ Լամարշ

On ne peut pas contourner le Jardin d'Erevan encore « vide »
Հնարավոր չէ շրջանցել դեռ «դատարկ» Երևանի անվան այգին

LES VESPÉRALES DE MONS EN BARŒUL

Chaque année, au mois de juin, la ville de Mons en Barœul organise des soirées festives et familiales autour de thèmes et d'arts différents : concerts, diffusions de films, expositions de photographies, sculpture, spectacles en tous genres. La manifestation de trois jours de cette année a été organisée dans le cadre du programme de Lille 3000 qui traitait de l'entrée dans l'Europe des pays de l'Europe de l'Est. L'affiche était riche : exposition de photographies de

Susanna Moughnetsyan lors de la préparation de plats arméniens
Սուսաննա Մուղնեցյանը հայկական ուտեստներ պատրաստելիս

ԵՐԵԿՈՒՅԹՆԵՐ ՄՈՆՍ ԱՆ ԲԱՐՈԼՈՒՄ

Ամեն տարվա հունիս ամսին Մոնս ան Բարոլի քաղաքապետարանը կազմակերպում է տոնական և ընտանեկան երեկույթներ տարբեր թեմաների և արվեստների շուրջ՝ ֆիլմերի ցուցադրում, համերգներ, լուսանկարների և քանդակների ցուցահանդեսներ, տարբեր ժանրերի ներկայացումներ... Այս տարվա միջոցառումները անցկացվեցին Լիլ 3000 ծրագրի շրջանակներում, որը նվիրված էր Արևելյան Եվրոպայի երկրների՝ Եվրոպական միու-

Silva, Arminé et Kristina préparent des plats arméniens
Սիլվան, Արմինեն և Քրիստինեն պատրաստում են ուտեստները

Martin Kollar présentant des situations cocasses de Slovaquie, musique avec la *Fanfare P4*, la formation de *Jazz Dresch quartet* et de l'électro avec les *Balkans Beats*,diffusion d'un film sur le peuple tzigane *Latcho Drom*, un spectacle équestre avec les cavaliers du *Djigit*, un labyrinthe monumental hongrois avec des jeux pour tous…

L'association *Caramel*, qui gère la Maison de quartier de la Concorde et organise des centres de loisirs et des activités pour les parents dans le même bâtiment que celui dans lequel nous organisons désormais nos cours de langue, nous a demandé de participer avec d'autres associations à la confection d'un buffet multiculturel pour l'ouverture de cette manifestation. Huit dames de l'association *Ararat* ont donc confectionné des mets délicieux au cours d'un atelier de cuisine dans les locaux de l'association *Caramel*.

Louisette, Nariné, Sousanna et Kristina pendant la soirée
Լուիզեթը, Նարինեն, Սուսաննան և Քրիստինեն երեկույթի ժամանակ

Le soir du 19 juin, les 200 convives de la Fête d'ouverture des Vespérales ont pu se régaler de poulet à la *bastourma*, de crêpes à la viande, de *khatchapouri*, de *gâtas*, de *passouts-dolma*, de *pachtet* d'haricot rouge, de gâteaux au miel et aux noix, d'*okrochka*… La curiosité des convives a été grande, plusieurs d'entre eux nous ont demandé les recettes de nos plats. Nous serons probablement à nouveau sollicités l'année prochaine.

L'association de la communauté grecque accompagnait également ce buffet de ses plats.

Cette manifestation a eu lieu dans un cadre exceptionnel : le Fort de Mons, ancienne bâtisse militaire à demi enterrée et disposant d'une superbe cour intérieure. Il abrite à l'année la médiathèque de cette ville et est entouré d'un parc où l'on peut se promener.

Une dizaine de membres de l'association et autant d'enfants ont participé à cette manifestation lancée par les discours de Monsieur le Maire de Mons en Baroeul et de Madame Martine Aubry, Présidente de la Communauté urbaine de Lille.

Louisette Lamarche

Les enfants ont également trouvé leurs occupations
Երեխաներն էլ գտան իրենց զբաղմունքը

թյանը անդամակցելու թեմային: Ցանկը հարուստ էր. Մարտին Կոլարի «Զվար-ճալի տեսարաններ Սլովակիայից» լուսանկարների ցուցահանդեսը, երաժշտություն` «Ֆանֆար P4»ի, «Ջազ Դրեշ» քառյակի և «Բալկանս Բիթս»ի կատարմամբ, գնչու ժողովրդի մասին պատմող «Լաչո Դրոմ» ֆիլմի ցուցադրումը, Ջիգիթների ձիերով ներկայացումը, հունգարական մոնումենտալ լաբիրինթոսը բոլոր տարիքի մարդկանց համար խաղերով…

L. Lamarche et la présidente de la communauté greque de Lille
Լ. Լամաղշը և Լիլի հունական համայնքի նախագահը

«Կարամել» միությունը, որ տնօրինում է «Կոնկորդ» թաղային մշակույթի կենտրոնը և որը կազմակերպում է ժամանցային ծրագրեր ծնողների համար, նույն շենքում որտեղ անց ենք կացնում հայոց լեզվի մեր դասընթացները, մեզ առաջարկել էր այլ միություններ հետ մեկտեղ մասնակցել տարբեր ազգային խոհանոցների ուտեստների պատրաստման գործին, որը պետք է բացեր այս երեկոն: «Արարատ» միության անդամ ութ կանայք իրենց համեղ կերակրատեսակները պատրաստեցին «Կարամել» մշակույթի տան սենյակներում, ազգային խոհանոցների խմբակի շրջանակներում:

Հունիսի 19-ի երեկոյան միջոցառման բացմանը ներկա գտվող 200 հյուրեր վայելեցին հավով բաստուրման, մսով թխվածքաբլիթները, խաչապուրին, գաթան, կարմիր լոբով պաշտետը, պասուց դոլման, մեղրով և ընկույզով քաղցրավենիքները, մածնաբրդոշը… Մեծ էր հյուրերի հետաքրքրասիրությունը, նրանցից շատերը մեզանից բաղադրատոմսեր խնդրեցին: Հավանաբար մյուս տարի ևս մեզ կհրավիրեն մնանատիպ միջոցառմանը մասնակցելու:

Հույն համայնքի միության անդամները նույնպես այնտեղ էին իրենց պատրաստած ուտեստներով:

Այս միջոցառումը տեղի ունեցավ մի բացառիկ վայրում. Ֆող դը Մոնսը հրաշալի ներքին բակով, կիսով չափ հողի տակ գտնվող մի հին ռազմական կառույց է: Զբոսայգով շրջապատված այս վայրում է գտնվում նաև քաղաքի մեդիաթեքը:

Միության մոտ մեկ տասնյակ անդամներ և նույնքան էլ երեխաներ մասնակցեցին այս միջոցառմանը, որտեղ ելույթ ունեցան Մոնս ան Բարոլի քաղաքապետը և Լիլի քաղաքային համայնքի նախագահ տիկին Մարտին Օբրին:

Լուիզեթ Լամարշ

Le goûter et quelques plats / Համտեսումը և մի քանի ուտեստներ

ELLE S'APPELLE GAYANÉ ET NON LOUCINÉ

Vous êtes nombreux à avoir vu le film de Robert Guédiguian *Le voyage en Arménie*. L'héroïne du film est emmenée par son ami le général dans un restaurant à domicile : « Chez Louciné ».

À l'occasion de nos vacances en Arménie cet été, nous avons découvert que ce restaurant et sa patronne existent bien réellement. Cette dernière s'appelle Gayané et non Louciné et c'est bien elle qui joue son propre rôle dans le film.

L. Lamarche aux côtés de Gayané dans son appartement-restaurant
Լ. Լամարշը Գայանեի կողքին նրա բնակարան-ռեստորանում

Pianiste de talent et de métier, elle a ouvert ce restaurant chez elle il y a douze ans après le décès de son mari. Le lieu est simple et authentique. Nous sommes là dans l'intérieur commun à toutes les familles arméniennes, très loin des cafés luxueux et bruyants des parcs d'Erevan. Son goût artistique transparait dans les toiles et dessins exposés, jusqu'aux disques de vinyle peints par une petite voisine de 20 ans. Le lieu est fréquenté par des anonymes arméniens devenus des amis pour certains, par des touristes comme nous et par des personnalités comme en témoignent quelques photographies. Le menu est composé de mets traditionnels, simples mais de qualité. Je vous conseille de goûter son tarkhoun, cette limonade à l'estragon qui vous changera de l'omniprésent Coca-cola. Situé à deux pas de l'Opéra (2 rue Toumanian 7/2, tel. : (37410) 530 320, réservation souhaitable), cet appartement se situe au rez-de-chaussée d'un petit immeuble, conçu par son père et situé dans la cour d'autres immeubles loin de la rue. Une salle d'exposition des peintures est située juste en face. Il n'y a pas d'indication, pas d'enseigne dans la rue, il suffit de demander aux voisins, le lieu est connu.

Gayané est une femme chaleureuse et cultivée. À notre grande surprise, elle nous a dit connaître Lille. Elle y est passée à l'occasion d'une tournée de concerts à laquelle elle a participé en tant que pianiste. En fille d'architecte, Gayané a pu apprécier la Grande place et ses maisons du 17^{e} siècle. En notre honneur, elle a interprété quelques airs arméniens et français. Un vrai bonheur et beaucoup d'émotions...

Si vous en avez l'occasion, ne ratez pas cette adresse, vous repartirez rassasiés et heureux tout simplement.

Louisette Lamarche

ՆՐԱ ԱՆՈՒՆԸ ԼՈՒՍԻՆԵ ՉԷ, ԱՅԼ ԳԱՅԱՆԵ

Ձեզանից շատերն են տեսել Ռոբերտ Գեդիկյանի «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» կինոժապավենը: Ֆիլմի հերոսուհին հրավիրվում է իր գեներալ ընկերոջ կողմից մի ռեստորան, որը կոչվում է «Լուսինեի մոտ»:

Այս ամռանը Հայաստան կատարած ճանապարհորդության ժամանակ մենք բացահայտեցինք, որ այդ ռեստորանը և նրա ձեռնարկատերը իրականում գոյություն ունեն: Վերջինիս անունը Գայանե է, այլ ոչ Լուսինե: Նա էլ հենց իր դերն է կատարում այդ ֆիլմում:

Մասնագիտությամբ նա շնորհալի դաշնակահարուհի է: Տասներկու տարի առաջ՝ ամուսնու մահվանից հետո, Գայանեն իր տանը բացում է այս ռեստորանը: Վայրը շատ հասարակ է և իրական: Մենք գտնվում ենք հայկական ընտանիքներին բնորոշ մի միջավայրում, որը բավականին տարբերվում է երևանյան զբոսայգիների շքեղ և աղմկոտ սրճարաններից: Գայանեի ստեղծագործական ճաշակի վկաները պատերին կախված կտավներն ու նկարներն են, ինչպես նաև 20-ամյա մի երիտասարդ հարևանուհու աշխատանքները՝ կատարված վինիլային ձայնասկավառակների վրա: Այստեղ գալիս են պատահական հաճախորդներ, որոնցից ոմանք դարձել են Գայանեի մտերիմները, ինչպես նաև մեզ նման մի քանի զբոսաշրջիկներ և ճանաչված մարդիկ, որոնց կարելի է տեսնել պատերին փակցված լուսանկարների վրա: Ճաշացուցակը բաղկացած է ավանդական պարզ, բայց որակով ուտեստներից: Ես ձեզ խորհուրդ կտայի փորձել թարխունի ըմպելիքը, որ կփոխարինի ճանաչված կոկա-կոլային: Օպերայից ոչ հեռու գտնվող այս բնակարանը (Թումանյան փողոց 2, 7/2, հեռ.: (37410) 530 320), ոչ մի ուղենիշ կամ ցուցանակ չունի, բավական է հարցնեք հարևաններից. այդ տեղը ճանաչված է:

Gayané Arevchatyan dans le salon de son appartement-restaurant
Գայանե Արևշատյանը իր բնակարան-ռեստորանի նախասրահում

Գայանեն շատ բարեհամբույր և բազմակողմանի զարգացած կին է: Ի զարմանս մեզ՝ նա ասաց որ ծանոթ է Լիլին: Նա անցել է քաղաքով համերգային շրջագայություններից մեկի ժամանակ, որին մասնակցել է որպես դաշնակահարուհի: Լինելով ճարտարագետի աղջիկ՝ Գայանեն կարողացել է գնահատել Մեծ հրապարակը՝ իր 17-րդ դարի շինություններով: Մեր պատվին նա կատարեց մի քանի հայկական և ֆրանսիական պիեսներ: Ի՜նչ մեծ բավականություն և որքա՜ն հուզմունքներ:

Եթե դուք հնարավորություն կունենաք Հայաստան գնալու, չմոռանաք այս հասցեն. դուք այդ վայրից կհեռանաք մեծ բավա-բարվածությամբ և պարզապես երջանիկ:

Լուիզեթ Լամարշ

DES NOUVELLES DES COURS D'ARMÉNIEN

Après une longue suspension d'octobre 2008 au 14 février 2009, les cours d'arménien ont repris pour les enfants dans un local mis à notre disposition par la ville de Mons en Barœul, 41 rue Vincent de Paul. Ce local est situé dans le même bâtiment que l'association *Caramel* qui mène des activités pour les enfants et les parents (centre de loisirs, sorties, atelier cuisine, couture, …).

Une dizaine d'enfants ont donc repris les cours avec Siranouche, Hayk et Susanne. Après le cours d'apprentissage de l'alphabet, de l'écriture et de la lecture, poursuite des cours de l'année dernière, Susanne a apporté sa connaissance de l'histoire et de la culture arméniennes aux enfants. Elle a présenté les grands événements de l'histoire arménienne (d'importantes batailles : Vardanats, de Sardarapat, de Kharakilissa, de Bach-Aparan, la guerre héroïque d'Artsakh, le génocide…), les éminents écrivains et hommes politiques, les grandes fêtes et rites nationaux et religieux, les sources et les symboles nationaux.

À l'issue des cours de langue, Louciné a donné en mai et juin quelques cours de danse arménienne pour les enfants. L'ensemble de ces cours reprendront à Mons en Barœul le 19 septembre prochain à 14 heures dans le bâtiment de l'association *Caramel*. Comme les autres années nous tenons une permanence de l'association simultanément au même endroit. Alors venez nombreux.

Louisette Lamarche

Les enfants après avoir décoré les œufs de Pâques / Louciné a repris les cours de danse arménienne Երեխաներն իրենց ձեռքով նկարազարդած Զատիկի ձվերով / Լուսինեն վերսկսեց հայկական պարի պարապմունքները

DES ARTISTES ARMÉNIENS EXPOSENT À LILLE

La métropole lilloise a organisé le festival Lille 3000, Europe XXL du 14 mars au 12 juillet 2009. De nombreuses manifestations ont eu lieu dans tous les domaines culturels : cinéma, musique, danse, peinture, photographie… Le principe était de mettre à l'honneur, pour les faire mieux connaître, les pays et peuples de l'ex-Union soviétique et de l'Europe de l'Est, ceux qui sont entrés récemment dans la Communauté européenne ou souhaitent y entrer.

Malheureusement, l'Arménie n'a pas eu droit de citer en tant que telle cette longue fête. Mais, les Arméniens ont été représentés par quelques artistes au sein des expositions intitulées : « Istanbul, traversée » et « Miroirs d'Orients ». Celles-ci se sont déroulées au Palais des Beaux-arts de Lille en face de la Préfecture.

La première exposition avait pour but de présenter la diversité culturelle d'Istanbul avec ses 14 millions d'habitants, au carrefour de l'Occident et de l'Orient. Les thèmes abordés sont transversaux et touchent également les sociétés de l'ex-Union soviétique : émigration, mutation économique, politique et urbaine, recherche d'identité. À ce titre, la question et la sensibilité arméniennes en Turquie n'ont pas été oubliées et se sont exprimées de différentes façons.

Atom Egoyan l'a fait de façon très directe en contant la vie d'Aurora Mardiganian exilée aux États-Unis après la mort de

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՑ

Տևական դադարից հետո (2008 թ. հոկտեմբերից մինչև 2009 թ. փետրվարի 14-ը) Մոնս ան Բարոլ քաղաքում (Վենսան դը Պոլի փողոց, 41) վերսկսվեցին հայոց լեզվի պարապմունքները մեր երեխաների համար: Մեզ հատկացված տարածքը գտնվում է «Կարամել» միության շենքում, որտեղ վերջինս կազմակերպում է տարբեր միջոցառումներ երեխաների ու նրանց ծնողների համար. ազատ ժամանցի կենտրոն, էքսկուրսիաներ, խոհանոցի և կարի խմբակ-ներ...

Մոտ մեկ տասնյակ երեխաներ վերսկսեցին իրենց դասերը Սիրանուշի, Հայկի և Սուսաննայի հետ: Նախորդ տարվա ընթացքում հայոց այբուբենի տառերը ճանաչելուց, հայերեն գրել և կարդալ սովորելուց հետո Սուսաննան երեխաներին փոխանցեց իր գիտելիքները հայ ժողովրդի պատմության և մշակույթի մասին: Նա երեխաներին էր ներկայացնում հայ ժողովրդի պատմության նշանավոր իրողությունները (մեծ ճակատամարտեր՝ Վարդանանց, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի, Արցախյան հերոսամարտը, հայոց Մեծ Եղեռնը...), հայ անվանի գրողներին և ազգային գործիչներին, հայոց պետական, ազգային և եկեղեցական կարևորագույն տոներն ու արարողությունները, ազգային ակունքներն ու խորհրդանիշերը:

Մայիս և հունիս ամիսներին, հայերենի պարապմունքներից հետո Լուսինեն երեխաների հետ անցկացրեց հայկական պարի մի քանի դասեր: Մենք դրանք կվերսկսենք սեպտեմբերի 19-ին ժամը 14-ին Մոնս ան Բարոլի « Կարամել » միության շենքում.

Ինչպես նախորդ տարիներին, նույն տեղում մենք զուգահեռաբար կկազմակերպենք մեր միության պարբերական հավաքները: Ուրեմն մենք Ձեզ սպասում ենք:

Լուիզեթ Լամարշ

ՀԱՅԱԶԳԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ ՑՈՒՑԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԼԻԼՈՒՄ

2009 թ. մարտի 14-ից մինչև հուլիսի 12-ը Լիլի ագլոմերացիայում կազմակերպվեց «Լիլ 3000, Եվրոպա XXL» փառատոնը: Բազմաթիվ միջոցառումներ տեղի ունեցան մշակույթի բոլոր բնագավառներում՝ կինո, երաժշտություն, պար, նկարչություն, լուսանկարչություն... Հետապնդվող նպատակը հետևյալն էր. ավելի լավ ճանաչել նախկին Սովետական Միության և Արևելյան Եվրոպայի երկրներն ու ժողովուրդներին, որոնք վերջերս են մտել կամ ցանկանում են մտնել Եվրոմիության կազմի մեջ:

Ցավոք սրտի Հայաստանին պատիվ չէր ընկել ընդգրկվելու այս երկարատև փառատոնի շրջանակների մեջ: Սակայն մի քանի հայազգի ստեղծագործողներ ներկայացված էին երկու ցուցահանդեսների մեջ՝ «Ուղևորություն դեպի Ստամբուլ» և «Արևելքի պատկերները»: Այս ցուցահանդեսները բացվել էին պրեֆեկտուրայի դիմաց գտնվող Գեղարվեստի թանգարանում:

Առաջին ցուցահանդեսը նպատակ էր հետապնդում ներկայացնել Արևմուտքի և Արևելքի խաչմերուկում գտնվող այդ տասնչորս միլիոն բնակչություն ունեցող քաղաքի մշակութային բազմազանությունը: Ընտրված թեմաները բազմազան էին և արծածում էին նաև նախկին Սովետական Միության հասարակություններին հուզող թեմաներ՝ արտագաղթ, տնտեսական, քաղաքական և քաղաքաշինական վերափոխումներ, ազգային ինքնության որոնումներ:

Այս պարագաներում զգայուն և ցավոտ հայկական հարցը Թուրքիայում չէր անտեսվել և արտահայտվել էր տարբեր ձևերով ու միջոցներով:

Stéphane Passet. *Groupe de femmes et de fillettes arméniennes*, Istanbul, 1912

Ստեֆան Պասսե. «Մի խումբ հայ կանայք և աղջիկներ», Ստամբուլ, 1912 թ.

ses parents à l'issue du génocide de 1915. Les témoignages (publié en 1918) de son personnage, est interprété dans son film par sept comédiennes différentes qui restituent ce passé douloureux.

Sarkis (Zabunyan) a travaillé, lui, sur un passé beaucoup plus lointain : des vestiges d'embarcations datant de l'époque de Constantin découverts en 2004 à l'occasion du percement d'un tunnel ferroviaire reliant la rive asiatique au continent européen. Les restes de ces 32 navires mis en images sont entourés d'autres pièces du passé et éclairés de croix de néon.


Sarkis et les restes des bateaux byzantins
Սարկիսը և բյուզանդական նավերի մնացորդները

Hussein Chalayan a lui réalisé un film décrivant le voyage à grande vitesse d'une jeune femme entre Londres et Istanbul en passant par le Bosphore. Elle utilise un véhicule futuriste individuel, sorte de bulle protectrice hors du temps, qui file en suspension à quelques mètres du sol. Une autre manière d'illustrer le déracinement d'une personne en vingt minutes.

Le véhicule futuriste d'Hussein Chalayan et son héroïne
Հուսեյն Չալայանի փուտուրիստական ինքնաշարժը և նրա հերոսուհին

Ces trois œuvres se sont parfaitement intégrées parmi celles d'une vingtaine d'autres d'artistes turcs. Ces artistes arméniens, originaires de Turquie mais tous expatriés (Canada, France et Grande Bretagne), ont su prendre leur place dans cette exposition pour représenter un nouvel apport des Arméniens à la Turquie ici à Lille. Les partenaires turcs et français de cette exposition nous ont proposé là un beau voyage pour les esprits curieux de l'évolution de ce pays.

La seconde exposition visait à mettre en parallèle les représentations des pays situés du Maroc à l'Iran par les peintres orientalistes du 19^{e} siècle qui ont suivi les campagnes de découverte de Napoléon Bonaparte, et celles d'artistes de ces pays depuis cette époque jusqu'à nos jours. Le jeu de miroir entre ces deux points de vue est passionnant. Au fur et à mesure de la découverte de ces toiles, photographies et vidéos, on pouvait voir évoluer l'image de ces sociétés que ces artistes ont d'abord observées puis dans lesquelles ils ont vécues.

Parmi ces œuvres figurait une photographie de femmes et de fillettes arméniennes en Turquie datant de 1912. On ne peut qu'être émus en découvrant ces visages et en se questionnant sur leur devenir trois ans plus tard...

La photographe iranienne Shadi Ghadirian, qui vit et travaille à Téhéran, a présenté une série de portraits de femmes iraniennes en costume traditionnel dans leur intérieur mais posant avec des objets de grande consommation occidentaux (vélo, casque, ra-

Ատոմ Եգոյանը դա արել էր շատ ուղղակի՝ պատմելով Ավրորա Մարդիգանյանի կյանքը, ով գաղթել էր Միացյալ Նահանգներ 1915 թ. եղեռնի զոհ դարձած իր ծնողների մահից հետո: Նրա 1918 թ. տպագրված վկայությունները յոթ տարբեր դերասանուհիների կողմից մեկնաբանվում են մի ֆիլմում, որը վերականգնում են այս ցավոտ անցյալը:

Սարկիսը (Զաբունյան) աշխատել է ավելի վաղ անցյալի՝ Կոնստանտինոս կայսեր ժամանակաշրջանի նավերի մնացորդների վրա, որոնք հայտնաբերվել էին 2004 թ. երկաթուղային թունելի փոր-ման աշխատանքների ընթացքում, որը ասիական ափը պետք է միացներ եվրոպական մայրցամաքին: Այս 32 նավերի մնացորդները պատկերող նկարների ցուցադրումը կատարվում էր նեոնային խաչերի լույսերով լուսավորված մի սրահում, որտեղ ցուցադրվում էին նաև հնուց եկած այլ իրեր:

Հուսեյն Չալայանը նկարահանել էր մի ֆիլմ, որը ներկայացնում էր մի երիտասարդ կնոջ՝ բարձր արագության տակ կատարվող ճանապարհորդությունը Լոնդոնից մինչև Ստամբուլ, որն անցնում է Բոսֆորի նեղուցով: Նա նստած էր մեկտեղանոց ֆուտուրիստական ինքնաշարժի մեջ՝ նման պաշտպանիչ ոչ այժմեական մի թափանցիկ կաղապարի, որը բարձր արագությամբ տեղաշարժ-վում էր օդում գետնից մի քանի մետր բարձրության վրա: Քսան րոպե տևողությամբ այս ժապավենը պանդխտության մեկնաբան-ման յուրօրինակ ձև էր:

Այս երեք գործերը կատարյալ ձևով ընդգրկվել էին թվով մոտ քսան թուրք ստեղծագործողների աշխատանքների մեջ: Արմատներով Թուրքիայից, բայց բոլորն էլ արտագաղթած (Կանադա, Ֆրանսիա և Մեծ Բրիտանիա) այս հայազգի արվեստագետները կարողացել էին այս ցուցահանդեսում զբաղեցնել իրենց ուրույն տեղը՝ դրանով իսկ կատարելով իրենց ներդրումն այս երկրի համար մեզ մոտ՝ Լիլում: Այս ցուցահանդեսի թուրք և ֆրանսիացի գործընկերները առաջարկել էին մի գեղեցիկ ճանապարհորդություն նրանց համար, ովքեր հետաքրքրվում են այս երկրի զարգացման գործընթացով:

Երկրորդ ցուցահանդեսը նպատակ էր հետապնդում զուգահեռներ անցկացնել 19-րդ դարի արևելյան թեմաներով նկարող եվրոպական նկարիչների, որոնք հետևել էին Նապոլեոն Բոնապարտի արշավանքները, և Մարոկկոյից մինչև Իրան գտնվող երկրների նկարիչների՝ Արևելքի մասին մինչև մեր օրերն ունեցած պատկերացումների միջև: Արտացոլումների խաղը այս երկու տեսակետների միջև շատ ուշագրավ էր: Կտավները, լուսանկարները և ֆիլմերը նայելիս աստիճանաբար կարելի էր նկատել, թե ինչպես են փոխվում այս հասարակությունները, որոնց մեջ արվեստագետներն իրենց զգում են նախ որպես դիտորդ, հետո որպես մի մասնիկ:

Աշխատանքների մեջ կար 1912 թ. մի լուսանկար, որտեղ պատկերված էին Թուրքիայում ապրող մի խումբ հայ կանայք և աղջիկներ: Նայելով այս դեմքերին կարելի էր միայն հուզվել, եթե ինքդ քեզ հարց տայիր, թե ինչպես են տնօրինվել նրանց ճակատագրերը երեք տարի հետո…

Les Iraniennes selon Shadi Ghadirian/ Իրանուհիները՝ ըստ Շադի Ղադիրյանի

Իրանահայ լուսանկարչուհի Շադի Ղադիրյանը, որը ապրում և աշխատում է Թեհրանում, ներկայացրել էր ազգային տարազներով իրանուհիների դիմանկարների մի շարք: Գտնվելով տնային պայմաններում նրանք կեցվածք են ընդունում՝ ձեռքի տակ ունենալով Արևմուտքում մասսայական պահանջարկ ունեցող իրեր (հեծանիվ, սաղավարտ, ռադիո...): Բարձր վարպետությամբ արված այս լուսանկարները արտացոլում էին Իրանում կանանց ապրելու պայմանները՝ պարփակված իրենց մեջ, բայց և ձգտող դեպի նորը և սպառողական հասարակությունը: Մեզ շատ կհետաքրքրեր Շադի

dio,…). Ces photographies d'une grande qualité, illustrent les femmes iraniennes confinées dans leur intérieur, mais avides de modernité et de consommation. Nous serions curieux de voir Shadi Ghadirian travailler sur la communauté arménienne de ce pays limitrophe de l'Arménie.

Merci aux organisateurs de ces expositions de nous avoir donné l'occasion de découvrir ces artistes.

Louisette Lamarche

Liste des nouveaux membres de l'Association *Ararat* (2008/2009) à la date du 1er septembre 2009 (15 euros par famille)
«Արարատ» միության նոր անդամների ցուցակը (2008/2009) 2009 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ (15 եվրո՝ ընտանիքից)

32. Arakelian	Armen et Mariam
33. Babayan	Arsen et Silva
34. Bedikian	Samvel et Anahit
35. Karapetyan	Vahé et Gayané
36. Topehyan	Emin
37. Yeghinian	Mher et Anna
38. Yeghinian-Yeghiazarian	Norayr et Mariné
39. Grikyan Adamian	Hakob et Varoujan

Liste des dons effectués à ce jour (septembre 2009)

1. 150 euros obtenus par Gark Galstyan et Annie Allain dans le cadre d'une conférence sur Moscou donnée à la médiathèque de Marcq en Barœul
2. 45 euros versés par Arsen Babayan
3. 150 euros de subvention de la ville de Mons en Barœul

Le 19 septembre 2009, à 14 heures : reprise des cours d'arménien et de danse pour les enfants à Mons en Barœul (41, rue St Vincent de Paul, 59370).

Le 20 septembre **2009, France2** présentera le téléfilm *Azad* réalisé par Nicolas Tackian. Le film retrace l'histoire du grand-père du jeune réalisateur et du génocide arménien. À ne pas manquer.

Le 20 septembre 2009 aura lieu la deuxième édition de la Journée interculturelle des associations à la Maison des associations de Lille (72/74 rue Royale). L'association *Ararat* y participera pour faire goûter nos spécialités. Vos idées et votre aide sont bienvenues.

Le 13 novembre 2009, à Roubaix (Archives Nationales du Monde du Travail, 78 boulevard du Général-Leclerc, tel. : 03.20.65.38.00) aura lieu l'intervention de Garik Galstyan intitulée « Le sport et le jeu dans la culture arménienne » dans le cadre du colloque « Jeu et enjeu culturel du sport » organisé par le *Cercle Bernard Jeu*.

À visiter : Musée Virtuel Arménien de France en attendant la réouverture physique de ce musée sur www.le-maf.com.

Responsables de publication en français : Louisette Lamarche, Garik Galstyan
Responsables de publication en arménien : Garik Galstyan, Hayk Gambarian, Susanna Mughnetsyan
Traductions : Garik Galstyan, Hayk Gambarian

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Ղադիրյանին տեսնել աշխատելիս Իրանի հայկական համայնքի կյանքի թեմաների շուրջ:

Շնորհակալություն կազմակերպիչներին այս ցուցահանդեսների համար, որոնք մեզ հնարավորություն տվեցին ծանոթանալ վերոհիշյալ արվեստագետների գործերին:

Լուիզեթ Լամարշ

ASSOCIATION ARARAT
4 Impasse du clos Ferrer
59000, Lille-Fives

BULLETIN D'ADHESION

Nom, Prénom ______________________________
Adresse ______________________________
____
Mail ____________________ Téléphone ________________
Adhère à l'association ARARAT pour l'année 2009/2010
a payé une adhésion de 15 euros (par famille)

(Date et Signature)

Մինչև 2009 թ. սեպտեմբերը կատարված նվիրատվությունները

1. 150 եվրո փոխանցվել է Գարիկ Գալստյանի և Աննի Ալլենի Մարք ան Բարոլ քաղաքի մեդիաթեքում Մոսկվայի մասին տված կոնֆերանսի համար:
2. 5 եվրո փոխանցել է Արսեն Բաբայանը
3. 150 եվրո ստացվել է Մոնս ան Բարոլի քաղաքապետարանից

2009 թ սեպտեմբերի 19-ին, ժամը 14.00 երեխաների համար կվերսկսվեն հայոց լեզվի և պարի դասընթացները: Հասցեն՝ 41, rue St Vincent de Paul, 59370, Mons en Barœul:

2009 թ սեպտեմբերի 20-ին France2 հեռուստաալիքը կներկայացնի Նիկոլա Թաքյանի «Ազատ» հեռուստաֆիլմը: Կինոժապավենը շարադրում է երիտասարդ ռեժիսորի պապու և Հայոց Եղեռնի պատմությունը: Բաց մի՛ թողեք այն նայելու հնարավորությունը:

2009 թ սեպտեմբերի 20-ին Հասարակական միությունների տանը (72/74 rue Royale) երկրորդ անգամ կնշվի Հասարակական միությունների միջմշակութային օրը: «Արարատ» միությունը կմասնակցի այս միջացառմանը՝ հրամեցնելով հայկական ուտեստներ: Ձեր մտահղացումներն ու օգնությունը խրախուսելի են:

2009 թ. նոյեմբերի 13-ին Ռուբեում (Աշխատանքի Ազգային Արխիվ, 78 boulevard du Général Leclerc, հեռ. : 03.20.65.38.00) տեղի կունենա Գարիկ Գալստյանի ելույթը «Սպորտը և խաղը հայկական մշակույթի մեջ» թեմայով՝ «Խաղի և սպորտի մշակութային նշանակությունը» գիտաժողովի շրջանակներում: Կազմակերպիչ՝ «Բերնար Ժյոյի համակիրներ» միություն:

Անպայման այցելեք www.le-maf.com՝ Ֆրանսիայի հայկական վիրտուալ թանգարանը մինչև նրա ֆիզիկական վերաբացումը:

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Լուզեթ Լամարշ և Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Գարիկ Գալստյան, Հայկ Ղամբարյան, Սուսաննա Մուղնեցյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի և Հայկ Ղամբարյանի

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները Դուք կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06